«Երևան Լեոյի անվան հ. 65 ավագ դպրոց» ՊՈԱԿ

Հերթական ատեստավորման ենթակա
ուսուցիչների վերապատրաստման դասընթացի
հետազոտական աշխատանք

Առարկա՝ Հասարակագիտություն
Մասնակից՝ Մարգարիտա Բաղալյան
Ղեկավար՝ Ա. Սաֆարյան

Թեմա՝ Սովորողների մեջ ինքնուրույնության, նախաձեռնության և ստեղծագործական ունակությունների զարգացումը հասարակագիտություն առարկայի դասավանդման ընթացքում

Երևան - 2023

Բովանդակություն

Ներածություն **3**

Գլուխ1. Ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծարար ունակությունների էությունը և դրսևորման առանձնահատկությունները.....**6**

Գլուխ 2. 7-րդ և 8-րդ դասարանի սովորողների մեջ ինքնուրույնության, նախաձեռնության և ստեղծագործական ունակությունների զարգացումը հասարակագիտություն առարկայի դասավանդման ընթացքում.....**13**

Եզրակացություն.....20

Գրականության ցանկ **23**

Հավելված.....**24**

Ներածություն

Թեմայի արդիականությունը: Հետազոտության արդիականությունը պայմանավորված է նրանով, որ ուսումնական գործընթացում սովորողների մեջ ինքնուրույնության, նախաձեռնության ու ստեղծագործական ունակությունների զարգացումը տարբեր է, և յուրաքանչյուր առարկայի դասավանդման ընթացքում տարբեր տեխնոլոգիաներ ու մեթոդներ կիրառելով՝ հնարավոր է պարզել և վերլուծել սովորողների հետաքրքրությունները, ինքնուրույն նախաձեռնողականության և ստեղծարարության դրսևորման առանձնահատկությունները, նրանց ստեղծագործական ունակությունների զարգացման հնարավորությունները:

Յուրաքանչյուր ուսուցչի նպատակներից է, որ իր աշակերտները լավ սովորեն, հետաքրքրվածությամբ ու սիրով ներգրավվեն ուսումնական գործընթացներում: Սա է նաև աշակերտների ծնողների ցանկությունը: Սակայն հաճախ և՛ ծնողներից, և՛ ուսուցիչներից ցավոք լսում ենք այնպիսի խոսքեր, ինչպիսիք են «Չի ուզում սովորել», «Այնքան լավ կարող էր սովորել, բայց ցանկություն չունի»: Այս խոսքերում մենք բախվում ենք այն փաստի հետ, որ աշակերտի մոտ չի ձևավորվել ուսման պահանջ, չկա ուսման հանդեպ հետաքրքրություն, դրդապատճառ: Ո՞րն է ուսման պահանջի էությունը, ինչպե՞ս է այն առաջանում, ինչպե՞ս է զարգանում, ի՞նչ միջոցներ կարելի է կիրառել, որպեսզի աշակերտի մոտ ձևավորվի հետաքրքրություն, գիտելիքներ ստանալու դրդապատճառներ, ինքնուրույն նախաձեռնողկանություն և ստեղծագործական ունակություններ: Սրանք հարցեր են, որ հուզում են և՛ ծնողներին, և՛ ուսուցիչներին: Ուսուցիչները գիտեն, որ հնարավոր չէ աշակերտին ըստ պատշաճի գիտելիք փոխանցել, եթե վերջինս անտարբեր է ուսման և գիտելիքի հանդեպ, չի գիտակցում դրանց կարևորությունը: Այս է պատճառը, որ դպրոցի առջև դրված է խնդիր ձևավորել և զարգացնել դրական դրդապատճառներ ուսուման հանդեպ և ստեղծագործական ունակություններ: Որպեսզի աշակերտները իսկապես ներգրավված լինեն ուսումնական գործընթացում, անհրաժեշտ է, որ նրանց առջև դրված ուսումնառության խնդիրները ոչ միայն հասկանալի լինեն, այլև ներքուստ ընդունելի:

Վերապատրաստման ընթացքում առանցքային նշանակություն ունեցան դասի ճիշտ պլանավորումը, դասերի տիպերի ուսումնասիրումը, հանրակրթական պետական չափորոշչի և առարկայական ծրագրերի ուսումնասիրումը, սովորողների հետաքրքրությունների և արժեքային համակարգի ձևավորման քայլերն ու դրանց կարևորությունը սովորողի ձեռքբերած գիտելիքների վերջնարդյունքի տեսնակյունից:

Այս ամենն առավել լավ և խորքային հասկանալու համար կարիք կա հետազոտել սովորելու դրդապատճառները 7-րդ, 8-րդ դասարանի աշակերտների շրջանում:

Հետազոտության խնդիրներն են՝

1. Ուսումնասիրել առարկայի դասավանդման ընթացքում հետաքրքրությունների, ինքնուրույնության, նախաձեռնության ու ստեղծագործական ունակությունների զարգացման վերաբերյալ առկա տեսական նյութերը:
2. Առարկայի դասավանդման ընթացքում կիրառել ժամանակակից ուսուցման տեխնոլոգիաներ ու հնարներ՝ նպաստելով սովորողների մեջ ստեղծարարության, ինքնուրույնության, նախաձեռնության ունակությունների զարգացմանը:
3. Կատարել արդյունքների ամփոփում, վերլուծություն և ներկայացնել եզրակացություն:

Հետազոտության վարկածն է՝

Մենք կարծում ենք, որ հասարակագիտություն առարկայի դասավանդման ընթացքում կիրառելով ժամանակակից ուսուցման տեխնոլոգիաներ ու հնարներ՝ կարող ենք զարգացնել աշակերտների հետաքրքրությունները, ստեղծարարությունը, ինքնուրույնությունը, նախաձեռնողականությունը և նպաստել նրանց վերլուծական կարողությունների ու հմտությունների զարգացմանը:

Հետազոտության ընտրանք՝ 7-րդ և 8-րդ դասարաններ:

Հետազոտության մեթոդներն են՝ զրույց-քննարկում, համեմատում, դիտում:

Հետազոտության ընթացքում իրականացվել են ֆոկուսխմբային երկու հարցազրույցներ: Արդյունքների հիման վրա հնարավոր է եղել պարզել այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են հասարակագիտություն առարկայի ուսումնական գործընթացի

և բովանդակության հանդեպ հույզերը, սովորելու սոցիալական և ճանաչողական դրդապատճառները, ինչպես նաև ստեղծագործական կարողությունները:

Գլուխ 1. Ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծարար ունակությունների էությունը և դրսևորման առանձնահատկությունները

Մարդու գործողությունները բխում են հստակ դրդապատճառներից և ուղղված են հստակ նպատակների: Դրդապատճառը այն է, ինչը դրդում է մարդուն գործողության: Չիմանալով դրդապատճառները՝ հնարավոր չէ հասկանալ, թե մարդն ինչու է ձգտում այս կամ այն նպատակին, հետևաբար հնարավոր չէ նաև հասկանալ վերջինիս գործողությունների իմաստն ամբողջությամբ:

Դրդապատճառը գործողության դրդելն է, ֆիզիոլոգիական և հոգեբանական վիճակներում դինամիկ գործընթաց, որ կառավարում է մարդու վարքը, որոշում է նրա հակումները, կազմակերպվածությունը, հետաքրքրությունները, ակտիվությունն ու կամքը, սեփական կարիքները իր գործունեությամբ բավարարելու ունակությունը: (5,էջ 11):

Որպես **դրդապատճառի տեսակներ** կարելի է առանձնացնել ***ճանաչողական*** և ***սոցիալական***: Ուսումնական առարկայի բովանդակության հանդեպ հետաքրքրությունը խոսում է ճանաչողական մոտիվների առկայության մասին: Ուսման ընթացքում այլ մարդկանց հանդեպ հետաքրքրությունն էլ խոսում է սոցիալական մոտիվների մասին:

Տարբեր դրդապատճառներ ունենում են իրենց տարբեր դրսևորումները ուսումնական գործընթացում: Օրինակ՝ լայն ճանաչողական դրդապատճառները դրսևորվում են խնդիրների լուծման, լրացուցիչ տեղեկատվության համար ուսուցչին դիմելու մեջ, ուսումնաճանաչողական դրդապատճառները՝ խնդիրների լուծումների որոնման ինքնուրույն քայլերում, նախաձեռնողականությամբ և ստեղծարարությամբ: Սոցիալական դրդապատճառները դրսևորվում են գործողություններում, որոնք վկայում են աշակերտի մոտ պատասխանատվության և պարտքի մասին, դիրքային մոտիվները դրսևորվում են տարեկիցների հետ հաղորդակցվելու և նրանց գնահատանքին արժանանալու, նախաձեռնողականության և ընկերներին օգնելու ձգտումների մեջ: Սոցիալական համագործակցության մոտիվներն են խմբային աշխատանքների հանդեպ ձգտումը և դրանք ռացիոնալ իրականացնելու գիտակցումը:

Յուրաքանչյուր սովորող օժտված է հետաքրքրություններով, արժանիքներով ու

ունակություններով: Իր կարողություններին համապատասխան ստեղծում է նոր նյութական և հոգևոր արժեքներ, որոնք նախկինում երբեք չեն եղել: Այդ արժեքները ծնվում են ինքնուրույնության, նախաձեռնության ու ստեղծագործական ունակությունների շնորհիվ: Նախաձեռնությունն ու ստեղծագործական ունակությունը ծնում են նորը, ակներևը, նախկինում երբեք գոյություն չունեցածը: Ստեղծագործական ունակության դրսևորման արդյունքում ստեղծվում է, հայտնաբերվում, հորինվում որևէ նոր բան: Սովորողի ինքնուրույն, նախաձեռնողական ու ստեղծագործական գործունեությունը անկրկնելի է, ինքնօրինակ և եզակի (հասարակական և անհատական առումով): Նույնիսկ բարձրակարգ կենդանիներն ունեն ստեղծագործականության ինչ-որ նախադրյալներ, սակայն ստեղծագործական գործունեությունը բնորոշ է միայն մարդուն: Ստեղծագործական գործունեությունը մարդու աշխատանքային գործընթացում առաջացած ընդունակությունն է՝ իրականությունից ստեղծված նյութից ստեղծելու նոր իրողություն, որը բավարարում է բազմազան հասարակական պահանջմունքների:

Ինքնուրույնությունն ու ստեղծարարությունը անձին բնորոշ ստեղծագործական տաղանդի մակարդակն են, որը ձևավորվում է անձի կայուն խառնվածքի ու անհատականության պարագայում: Ստեղծարարությունն անմիջականորեն առնչվում է նախաձեռնողությանն ու ինտելեկտին, այն ինտելեկտի զարգացման որոշակի աստիճան է և հանդես է գալիս ինտելեկտի գործառույթին զուգահեռ, կախված է անձի հոգեբանական բնութագրից:

Նախաձեռնությունը, ինքնուրույնությունը, առնչվելով մտածողության բաղադրատարրերին, իրենց նախադրյալներով գծագրում են սովորողի մտավոր, ստեղծագործական ունակությունների սահմանները, հնարավորություն են տալիս վերարտադրելու ձեռք բերած գիտելիքները, գործի դնելու մտածողությունը: Ստեղծագործական ունակությունը ակներև է դարձնում մտածողության դրսևորման յուրահատկությունը, սովորողի ունակությունն է դատողություններ և եզրահանգումներ անելու կյանքի և իրականության բազմազան իրողությունների վերաբերյալ:

Ստեղծագործական, նախաձեռնական ունակությունների զարգացումն ու դրսևորումն անմիջականորեն առնչվում են ինտելեկտին, որի միջոցով էլ մարդը կարողանում է արտահայտել գաղափարներն ու մտահաղացումները: Ըստ Թորենսի՝ ստեղծարարությունը ընդհանուր կարողություն է, որը հիմնվում է ընդհանուր ինտելեկտի, անձնային որակների և

արդյունավետ մտածողության կարողության վրա: Ստեղծարարությունը բնորոշվում է որպես գիտելիքներում թերությունների, բացթողումների, աններդաշնակության սուր ընկալում: Գիլֆորդը առանձնացնում էր ստեղծարարության չորս չափանիշ՝ սահունություն, ճկունություն, յուրօրինակություն և մշակվածություն: Թորենսի մեկնաբանությամբ սահունությունը հնարավորինս շատ գաղափարներ ստեղծելու կարողությունն է, ճկունությունը՝ խնդիրները լուծելիս բազմատեսակ ռազմավարություններ կիրառելու, յուրօրինակությունը՝ ոչ սովորական, անսպասելի գաղափարներ առաջ քաշելու, մշակվածությունը՝ առաջացած մտքերը մանրամասնորեն մշակելու կարողությունը:

Հայտնի տեսաբանները, մանկավարժները բազմազան բնորոշումներ են տվել ստեղծարարության գործընթացին: Երբեմն ստեղծագործելու շնորհը առկա փորձի վերափոխման հետևանք է դիտարկվում, երբեմն էլ նոր արարում: Բոլոր դեպքերում ստեղծարարական ձիրքը նոր մտքի, գաղափարին ծնունդ տալու ունակությունն է: Ստեղծարարական, նախաձեռնողական ունակությունների ի հայտ գալն արդեն խոսում է տվյալ սովորողի ինքնուրույնության, աշխարհընկալուման և մտածողության մասի, զարգացնում է ստեղծագործական մոտեցումը և քննադատական մտածողությունը, առանց որոնց չի կարելի պատկերացնել մարդու և ոչ մի գործունեություն: Բարձր մակարդակի ստեղծագործական գործունեությունը կապված է որակապես նոր հասկացության ստեղծման հետ, որը շատ թե քիչ հեղաշրջում է կատարում գիտության մեջ: Ա. Գ. Գալինը ցածր մակարդակի ստեղծագործական գործունեությունը ռացիոնալ համակարգված գիտելիքների, դրանց համակցման արդյունք է համարում, որը չի ենթադրում ինտուիտիվ տարրի առկայություն: Բարձրագույն տիպի ստեղծագործական գործունեությունը ներառում է նաև ինտուիցիան: Ըստ Ե. Պ. Իլյինի՝ ստեղծարարության բարձրագույն մակարդակը ոչ բոլորին է հասանելի, ինչը խոսում է անհատների մոտ ստեղծագործական ներուժի՝ ստեղծագործելու կարողության, տարբեր մակարդակների մասին: Մ. Բոդենը տարբերակում է ստեղծարարության երեք տիպ՝

1. համադրական ստեղծարարություն՝ նոր մտքի բացահայտում արդեն հայտնի մտքերի համադրմամբ,

2. հետազոտական ստեղծարարություն՝ խնդիրների ձևակերպում, դեռևս չուսումնասիրված հարցերի առաջ քաշում և լուծում,

3. ձևափոխվող ստեղծարարություն՝ գաղափարների առաջադրում, որոնց իրագործումը նախկինում անհավանական էր թվում: (6, էջ 20-24)

Ստեղծարարությունը անհատի ստեղծագործական ունակությունն է, որը բնութագրվում է նոր հիմնարար գաղափարներ ստեղծելու պատրաստակամությամբ, նախաձեռնությամբ ու սովորողի ինքնուրույն գործունեությամբ: Ստեղծարարությունը ներառում է խնդիրների, գիտելիքների բացակայության և անհամապատասխանության նկատմամբ բարձր զգայունություն, այդ խնդիրների բացահայտմանն ուղղված գործողություններ, հիպոթեզների վրա հիմնված լուծումների որոնում, հիպոթեզների փորձարկում և փոփոխություն:

Ստեղծարար սովորողը զարգացնում է տարբեր մոտիվների ազդեցությամբ առաջացած գաղափարների և մտահղացումների մարմնավորման կարողությունը, ինչի համար կիրառում են երևակայությունը, հույզերը, դիտարկման ունակությունը, նյութի նկատմամբ ստեղծագործական մոտեցումը և սովորելու գործընթացում ստացած գիտելիքը: Նախաձեռնության, ինքնուրույնության, ստեղծարարական ունակությունները յուրօրինակ արտացոլում են գտնում սովորողների մեջ:

Դպրոցական տարիքը անձի կայացման կարևորագույն փուլերից մեկն է, որի ընթացքում տեղի է ունենում անհոգ մանկությունից անցում այնպիսի մի շրջանի, երբ անհրաժեշտություն է ծագում նոր դերեր կրել, պատասխանատու լինել տարբեր պահանջներ իրականացնել, ստեղծագործել: Այս շրջանում հակասության մեջ են մտնում երկու հիմնական դրդապատճառ՝ անհրաժեշտության և ցանկության: Մի կողմից, առաջնորդվելով անհրաժեշտության պահանջմունքով, երեխան բացահայտում է հասուն կյանքը, իսկ մյուս կողմից, դրդված լինելով ցանկության պահանջմունքով, ստեղծագործական մղումով, երեխան ցուցաբերում է այնպիսի վարք, որը վերադարձնում է իրեն մանկության աշխարհ, որտեղ ամենը ապահով է, ծանոթ, իրականանալի, չկան որոշակի պարտականություններ և պահանջներ, բայց կա նաև ստեղծելու, արարելու ձգտում: Մի կողմից, երեխան իմպուլսիվ է, անհանգիստ, ունի ոչ կայուն ուշադրություն, իսկ մյուս կողմից, քանի որ նրա մոտ արդեն ձևավորվում է պահանջմունքների նոր մակարդակ, նա սկսում է ստեղծագործել, աշխատել՝ առաջնորդվելով որոշակի նպատակներով, արժեքներով, զգացմունքներով:

Ստեղծարարական ունակությունների զարգացման գործում մեծ նշանակություն ունեն

գրականությունը, երաժշտական դաստիարակությունը, որոնց նպատակն է երեխային ոչ միայն ապահովել համապատասխան ունակություններով, գիտելիքներով, այլև երեխային հաղորդակից դարձնել գրավիչ երաժշտական աշխարհը և դրանով իսկ հարստացնել երեխայի անհատականությունը:

Ստեղծագործելով մարդն ինքնարտահայտվում է, իրագործում իր մտքերն ու ցանկությունները: Ստեղծարարությունը ոչ միայն պատանեկան տարերք է, այլև հասուն մտքի, գաղափարի դրսևորում: Ուրեմն ստեղծագործական ունակությունները սահման կամ սահմանափակում չունեն: Ցանկացած մարդ, լինի արվեստագետ թե գրող, աշակերտ թե ուսուցիչ կարող է իր ստեղծագործական ձիրքը արտահայտել: Տեղի է ունենում փոխակերպում: Իրականություն են դառնում, կյանքի կոչվում մտքեր ու գաղափարներ, ծնվում են նոր ստեղծագործություններ: Մարդն ապրում է՝ յուրաքանչյուր պահի զգալով, ապրելով արարելու, ստեղծելու բերկրանքը:

Կրթական ծրագրերի կարևորագույն նպատակներից մեկը պետք է լինի սովորողի ինքնուրույն գործունեության, նախաձեռնողական, ստեղծագործական ունակությունների զարգացման համար պայմանների ստեղծումը, համամարդկային արժեքներին հաղորդակցումը, շփումը:

Անձի դաստիարակությունը և ներդաշնակ զարգացումը, ինչը հանդիսանում է դպրոցական կրթության հիմնական նպատակը, անհնար է առանց որևէ առարկայի հետ նրա հաղորդակցության: Տարբեր առարկաների ուսումնասիրությունը նրբացնում է նրա ընկալումը և զգացողությունը, երևակայության ունակությունը, զարգացնում է ստեղծագործական մոտեցումը և քննադական մտածողությունը, առանց որոնց չի կարելի պատկերացնել մարդու ցանկացածգործունեություն:

Անձի դաստիարակության, զարգացման համար անհրաժեշտ աշխատանքային գործունեությունը, նոր ուսումնական պլանի համաձայն, ինտեգրված է արվեստի ուսուցման հետ: Ցանկացած առարկայի ուսուցման շրջանակներում ուշադրությունը կենտրոնանում է տրամադրվածությունների, վերաբերմունքների, գործնական, ստեղծագործական և հետազոտական, որոնման կարողությունների և հմտությունների զարգացման և գիտելիքի կիրառման վրա: Այս ուղղության շրջանակներում աշակերտները ձեռք են բերում գործնական կարողություններ և հմտություններ, ծանոթանում և

տիրապետում են կերպարվեստի և կիրառական արվեստի տարրերին, սկզբունքներին, արտահայտչականության միջոցներին, տարբեր տեխնիկայի, նյութի, գործիքների և ընթացակարգերի:

Հոգեբանությունում հայտնի են բավականին շատ գործոններ, որոնք աշակերտի մոտ ուսման հանդեպ հետաքրքրություն են առաջացնում: Դիտարկենք դրանցից որոշները.

1. *Ուսմնական նյութի բացահայտման մեթոդը*: Սովորաբար առարկան աշակերտի համար հանդիսանում է մասնավոր երևույթների հաջորդականություն: Այդ երևույթներից յուրաքանչյուրն ուսուցիչը բացատրում է, տալիս է դրա հետ փոխազդեցության պատրաստի տարբերակ: Երեխային ոչինչ չի մնում անել բացի նրանից, որ հիշի այդ ամենն ու գործի ցուցադրված տարբերակով: Առարկայի նման բացահայտման տարբերակում մեծ ռիսկ կա, որ աշակերտի մոտ կարող է կորել հետաքրքրությունը: Հակառակը, երբ առարկայի ուսուցումն ընթանում է բոլոր երևույթների բուն էության բացահայտման միջոցով, ապա աշակերտը հենվելով այդ էության վրա, ինքնուրույն է յուրացնում մասնավոր երևույթները, ուսումնական գործընթացը նրա համար ձեռք է բերում ստեղծագործ բնույթ, և դրանով իսկ հետաքրքրություն է առաջացնում ուսուցանվող առարկայի հանդեպ: Սրա հետ մեկտեղ, ուսուցանվող առարկայի հանդեպ դրական վերաբերմունքի մոտիվացիա կարող է լինել ինչպես դրա բովանդակությունը, այնպես էլ առարկայի հետ աշխատելու մեթոդը:
2. *Ուսումնական առարկայի յուրացում փոքր խմբերով աշխատանքի կազմակերպմամբ*: Աշակերտներին փոքր խմբերի բաժանելով առարկայի վրա աշխատելը մեծ մոտիվացիոն նշանակություն ունի: Եթե չեզոք մոտիվացիայիով աշակերտներին միավորենք այն երեխաների հետ, որոնք չեն սիրում տվյալ առարկան, ապա համատեղ աշխատանքից հետո առաջինները զգալիորեն բարձրացնում են իրենց հետաքրքրությունը տվյալ առարկայի հանդեպ: Իսկ եթե չեզոք հետաքրքրասիրությամբ աշակերտներին ներառենք այդ առարկան շատ սիրող աշակերտների հետ նույն խմբում, ապա առաջին խմբի վերաբերմունքում ոչինչ չի փոխվի:

3. *Մոտիվների և նպատակների միջև հարաբերություններ*: Ուսուցչի կողմից դրվող նպատակը պետք է դառնա աշակերտի նպատակը: Նպատակներից մոտիվ-նպատակների ձևափոխման մեջ մեծ նշանակություն ունի աշակերտի կողմից սեփական հաջողությունները, առաջխաղացումների գիտակցումը:

Ուսուցման խնդրայնություն: Առարկայի յուրացման բոլոր էտապներում անհրաժեշտ է օգտագործել խնդրահարույց մոտիվացիաներ և առաջադրանքներ: Եթե ուսուցիչն անում է դա, ապա սովորաբար աշակերտների մոտիվացիան գտնվում է բավականին բարձր մակարդակում: Կարևոր է նշել, որ բնույթով այն համարվում է ճանաչողական, այսինքն ներքին (11, էջ 29):

Աշակերտները զարգացնում են տարբեր մոտիվների ազդեցությամբ առաջացած գաղափարների և մտահղացումների մարմնավորման կարողությունը, ինչի համար կիրառում են երևակայությունը, հույզերը, դիտարկման ունակությունը, նյութի նկատմամբ ստեղծագործական մոտեցումը և սովորելու գործընթացում ստացած գիտելիքը:

Գլուխ 2. 7-րդ և 8-րդ դասարանի սովորողների մեջ ինքնուրույնության, նախաձեռնության և ստեղծագործական ունակությունների զարգացումը հասարակագիտություն առարկայի դասավանդման ընթացքում

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել ինքնուրույնության, նախաձեռնության ու ստեղծագործական ունակությունների զարգացումը հասարակագիտություն առարկայի ուսուցման շրջանակում:

Հետազոտության խնդիրներնեն՝

1. Ուսումնասիրել առարկայի դասավանդման ընթացքում ինքնուրույնության, նախաձեռնության ու ստեղծագործական ունակությունների զարգացման վերաբերյալ առկա տեսական նյութերը:
2. Առարկայի դասավանդման ընթացքում կիրառել ժամանակակից ուսուցման տեխնոլոգիաներ ու հնարներ՝ նպաստելով սովորողների մեջ ստեղծարարության, ինքնուրույնության, նախաձեռնության ունակությունների զարգացմանը:
3. Կատարել արդյունքների ամփոփում, վերլուծություն և ներկայացնել եզրակացություն:

Հետազոտության վարկածն է՝

Մենք կարծում ենք, որ առարկայի դասավանդման ընթացքում կիրառելով ժամանակակից ուսուցման տեխնոլոգիաներ ու հնարներ՝ կարող ենք զարգացնել սովորողների ստեղծարարությունը, ինքնուրույնությունը, նախաձեռնողականությունը :

Հետազոտության ընտրանք՝ 7-րդ , 8-րդ դասարաններ:

Հետազոտության մեթոդներն են ՝ զրույց-քննարկում, համեմատում, դիտում:

Առարկայի հիմնական նպատակն է օժանդակել սովորողներին աշխարհընկալման ճանապարհին, օժանդակել նրանց ճանաչելու իրենց շրջապատող աշխարհն ու հասարակական գործընթացները: Իրենց շրջապատող աշխարհին ճանաչողությանը զուգահեռ սովորողները անընդհատ փորձում են ընդլայնել իրենց հետաքրքրությունները, պատկերացումները, մտահորիզոնը, ձեռք բերելու կայուն գիտելիքներ, կարողություններ և հմտություններ:

Հասարակագիտություն առարկան արդեն իսկ ինտեգրված դասընթացը է: Այն իր մեջ

ընդգրկում է գիտելիքներ պատմությունից, աշխարհագրությունից, գրականությունից , լեզուներից, հոգեբանությունից, արվեստից և այլն: Ուստի առարկայի դասավանդմանը բնորոշ են հետևյալ առանձնահատկությունները.

1. Ուսումնական գործընթացի կենտրոնում սոցիալական , տնտեսական, բնապահպանական և իրավական թեմաներ են, որոնք բխում են աշակերտների հետաքրքրություններից:
2. Ուսումնառությունը ընթանում է դպրոցական համայնքում ժողովրդավարական սկզբունքներով, որը հնարավորություն է տալիս աշակերտներին ցուցաբերելու ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակություններ:
3. Հասարակագիտություն առարկայի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ստացած գիտելիքները անմիջականորեն կիրառել առօրյաում՝ հասարակական հարաբերություններում /հաղորդակցում, վերաբերմունք, դերեր և բնության մեջ/:

Նշված դասընթացում հասարակական կարևորություն ունեցող հարցեր են: Դասընթացը ընդգրկում է նաև տարբեր առարկաներից ու ոլորտներից տեղեկություններ ու գաղափարներ: Ասվածից հետևում է, որ հասարակագիտություն առարկան ամբողջացնում է մարդուն, բնությանը և հասարակությանը վերաբերող հիմնական բաղադրիչները: Իրողությունն այն է, որ պարտադիր բովանդակությունն այս դեպքում վերադասավորվում է այնպես, որ աշակերտներին իմաստակերտման հնարավորություններ ընձեռնվեն:

Սովորողների աշխարհընկալման և բնաճանաչողական ընդունակություններին հատուկ են այնպիսի որակներ, ինչպիսիք են բնության օբյեկտները, երևույթները ընկալելու, ճանաչելու մտավոր արձագանքների արագությունը, դրանց օբյեկտիվ գնահատական տալու, շնչավորելու, հարաբերակցվելու ընդունակությունը: Այդ ունակությունները զարգացնելու նպատակով պետք է օգտագործել տարբեր միջոցներ, օրինակ՝ դիդակտիկ նյութեր,սահիկահանդես, դերային խաղեր, ֆիլմեր, էքսկուրսիաներ և այլն:

Սովորողների հասարակագիտական կրթության նպատակն հասարակության, մասնավորապես՝ մարդու արժեքային կողմնորոշումների փոփոխման, շրջապատող իրականության նկատմամբ սպառողական մոտեցման վերացման անհրաժեշտությունը: Մեծ արժեքների համակարգում մարդկանց մեծամասնությունը դեռևս կենտրոնացած է օգտակարության գաղափարի վրա, և մեր հասարակության մեջ «օգտակարի» « «տնտեսական նպատակահարմարության»«գիտական հաշվենկատության արժեքը դեռևս անհամեմատ

ավելին է, քան հուզականի, մարդասիրականի արժեքը: Ինչ խոսք առանց արժեհամակարգի արմատական փոփոխության կրթության, գործունեության և կենսակերպի ոլորտի հասարկագիտական ուղղվածության ցանկացած ծրագիր ենթակա է տապալման այն մարդկանց կողմից, որոնց աշխարհազգացողությունն ու աշխարհընկալումը հակամարդկային են:

Հասարակագիտություն առարկայի դասավանդման նպատակն է անհատի աշխարհաճանաչողության զարգացումը հասցնել այնպիսի մակարդակի, որի շնորհիվ նա ընդունակ կլինի իր խմբի համար կենսական անհրաժեշտություն ունեցող հարցերի լուծման առումով պատասխանատվություն կրելու (գիտակցական մոտեցման ցուցաբերում): Հասարակական խնդիրներն են.

1. շրջապատի նկատմամբ ճիշտ վարվելակերպի մշակում,
2. քաղաքացու դաստիարակում,
3. հասարակության մեջ ընդունելի մարդկային փոխհարաբերությունների հաստատում:
4. մարդու գիտակցությունից դուրս և նրանից անկախ բնության ու հասարակաության մեջ գոյություն ունեցող օբյեկտիվ գործընթացների արտացոլումը ճանաչողության մեջ և դրանց գնահատումը

Հասարակագիտություն առարկան իր մեջ ընդգրկում է մի շարք բաղադրիչներ՝

- բնապահպանական մշակույթի ձևավորում, երեխայի վարքում բնության հետ գիտակցված հարաբերությունների որոշակի մակարդակի ձևավորում,
- բնության, մարդկանց, իր և կյանքում իր դերի նկատմամբ գիտակցված վերաբերմունքի մշակում,
- բնության նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ձևավորում,
- սովորողի մեջ բնության պահպանման, բարելավման, զարգացման անհրաժեշտության գիտակցման դաստիարակում,
- սովորողի բնապահպանական գիտակցության ձևավորում, որը պետք է հիմնվի նրա խոր հուզազգացմունքային փորձի վրա,

- հասարակագիտական գիտակցության դրդապատճառային հիմքերի ձևավորում:
- սովորողի մեջ իր գոյության կենսամիջավայրի նկատմամբ վստահության զարգացում.
- կենդանի և անկենդան բնության տարբերությունների վերաբերյալ գիտելիքների, նրանց վերաձևավորման հարցում մտավոր և ֆիզիկական աշխատանքի դերի մասին պատկերացումների ձևավորում.
- վայրի բնության հետ մարդու խելամիտ փոխհարաբերության, և մարդու ստեղծարար աշխատանքի և մտավոր ստեղծագործության կարողությունների ձևավորում.
- հարափոփոխ աշխարհում հասարակական, քաղաքական, տնտեսական և մշակութային գործընթացների կապի ու փոխազդեցության մասին գիտելիքների ձեռքբերմանը և կիրառմանը, ինչպես նաև դրանցում դերակատարում ունեցած անհատների և խմբերի, նրանց փոխգործակցության իմացությանն ու վերլուծությանը, ներկայացնելով անհատի սոցիալականացման և հասարակական մասնակցության դրսևորումները՝ քննադատական և ստեղծագործ մտածողություն ունեցող պատասխանատու քաղաքացու ձևավորմանը:

Սրանք հիմք են հանդիսանում սովորողների՝ մարդու իրավունքների և պարտականությունների հետևողական ուսուցման համար:

Դասընթացի հայեցակարգում նշվում է սկզբունքների երկու խումբ՝ ընդհանուր մանկավարժական (մարդասիրության, գիտականության, համակարգվածության և այլն) և յուրահատուկ (կանխատեսման, ինտեգրման և այլն): Բացի համընդհանուր դիդակտիկական սկզբունքներից, դասընթացին վերաբերում են նաև հասարակական առանձին խմբերի փոխհարաբերությունների, հաղորդակցության, միասնականացման, անընդհատության, բնության գործառույթների ուսուցանող, բնապահպանական սկզբունքներ:

Տվյալների վերլուծություն

Ընդհանրացնելով հարցազրույցների արդյունքում ձեռք բերված տվյալները՝ պետք է առաջին հերթին նշել այն մեծ կարևորության մասին, որ տալիս են 7-8-րդ դասարանների աշակերտները հասարակագիտություն առարկային:

Հատկանշական է, որ հասարակագիտության հանդեպ վերաբերմունքը, կարևորություն տալը գրեթե նույնն էր և՛ բարձր, և՛ ցածր առաջադիմություն ունեցող սովորողների մոտ, ուղղակի այլ էին դրդապատճառները: Այս խմբի սովորողները մոտիվացված են առարկայի բովանդակության բացահայտմամբ: Գրավում է նոր գիտելիքներ, փաստեր յուրացնելը: Վերջինների մոտ կան հստակ պատկերացումներ ապագայի հանդեպ, և կարևորվում է կյանքի բոլոր փուլերում որպես գրագետ, կրթված անհատ հանդես գալը: Մի մասի մոտ մոտիվների առավել բարձր մակարդակ է նկատվում ինքնակրթության առումով: Էստեղ փոխլրացվում է ընթերցանության հանդեպ սիրով: Աշակերտները որպես առանձին մոտիվացիա նշում են ընթերցանությունն այն տեսակետից, որ ոչ միայն գրական ստեղծագործությունների հետ են ծանոթանում, այլև ավելի լավ են կարողանում հասկանալ մարդկային հարաբերություններն ու հասարակական հիմնախնդիրները: Մեջբերում. <<Եթե ես լավ չուսումնասիրեյի հասարակագիտություն առարկան, չի կաող հասկանալ իմ տեղն ու դերը հասարակությունում:

Հետաքրքրական է նաև ցածր առաջադիմություն ունեցողների մոտ հասարակագիտությունը սովորելու մոտիվները, որոնք գրեթե լիովին սոցիալական բնույթի են: Այս խմբի մոտ կարևոր է ճիշտ մարդկային փոխահարբերությունների հաստատումը և անծանոթ միջավայրերին ինտեգրումը : Աշակերտները գտնում են, որ որքան մարդը կիրթ է խոսում, գրագետ է լինում, այդքան նրան շրջապատն ավելի լուրջ է ընկալում և նրա խոսքն ավելի մեծ կշիռ է ունենում. Մեջբերում. *<<Ես մի անգամ ինձ լիովին անծանոթ տղաների վեճ եմ կարողացել հարթել միայն նրա շնորհիվ, որ տիրապետում էի կոնֆլիկտային իրավիճակներում ճիշտ կողմնորոշվելու հիմնական սկզբունքներին>>*: Եթե ցածր առաջադիմություն ունեցող աշակերտների դեպքում առօրյա կենցաղային խնդիրների լուծման մոտիվներն առաջնային, ապա բարձր առաջադիմություն ունեցողների սոցիալական մոտիվները մի քանի քայլ ավելի առաջ են նայում դեպի ապագան, վերջիններիս համար սովորելու մոտիվ են հանդիսանում պարտավորվածության և պատասխանատվության զգացողությունները ծնողների հանդեպ, հետագայում որպես պաշտոնատար անձիք շրջապատում արժանի դիրք զբաղեցնելը, նրանց կողմից ընդունված և հարգված լինելու ձգտումը և այլն:

Հետաքրքիր է, որ եթե մյուս առարկաների դեպքում կարող էին երեխաները թվարկել բազմաթիվ պատճառներ, որոնք դեմոտիվացնում են նրանց այս կամ այն առարկան սովորելու հարցում, ապա պատկերը լիովին այլ էր դառնում հասարակագիտություն առարկայի մասին խոսելիս:

Սովորողների համար նաև մոտիվացիայի առանձին աղբյուր են հանդիսում ծնողները. Ոմանց համար վերջիններիս պատժից խուսափելն է մոտիվ, ոմանց համար նրանց գոհունակությանը հասնելը, սակայն կա մի երրորդ խումբ, ում ծնողները, չունենալով կրթություն, զբաղվում են ծանր աշխատանքներով, դառնում են լավ սովորելու մոտիվացիա իրենց երեխաների համար, որպեսզի իրենք էլ չունենան նույն ծանր կյանքն, ինչ ծնողները:

Բարձր առաջադիմություն ունեցող աշակերտների շրջանում մոտիվների մեկ այլ աղբյուր էր համարվում նաև հասարակագիտություն առարկայի ուսուցման մեթոդները: Մեջբերում <<Էնքան լավ է անցնում դասը, երբ խմբերի ենք բաժանվում, առաջադրանք եք տալիս, որ պետք է միասին խմբով կատարենք>>: Հարցազրույցների ընթացքում նկատվեց, որ ուսման մոտիվացիան ավելի է բարձրանում աշակերտների մոտ, եթե դասն անցկացվում է թիմային աշխատանքների, ինչ-որ չափով մրցութային տարրեր ներգրավվելու միջոցով:

Եվ վերջին, բայց էլի շատ կարևոր մոտիվներից մեկը ուսուցչի հանդեպ աշակերտների անձնական վերաբերմունքն է: Նշում էին, որ որքան էլ գիտակցեն այս կամ այն առարկայի կարևորությունը, դա չի օգնում հաղթահարել այն հակամոտիվացիան, որ զգում են ուսուցչին չսիրելու դեպքում: Մեջբերում. <<Ես ինչքան էլ ուզեմ, մեկ է չեմ կարողանում տրամադրվեմ ընկ. (***)յանի դասերը սովորեմ: Հաստատ ոչ ինքն է մեզ սիրում, ոչ մենք իրեն>>:

Որպես կանոն, սովորողների մոտ ուսումնառությունը խթանվում է ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական կարողություններով, որոնք փոխլրացնում են միմյանց և գտնվում են միմյանց հետ որոշակի փոխհարաբերությունների մեջ: Սովորելու ամենատարբեր մոտիվներից այստեղ հատկապես առանձնանում են «ծնողին ուրախություն պատճառել» « «ուզում եմ իմանալ ավելին» « «դասի ընթացքը շատ հետաքրքիր է»: Գիտելիք ունենալով,

աշակերտը ստանում է բարձր գնահատականներ, որոնք իրենց հերթին առաջացնում են հուզական բավարարվածության, հպարտության զգացումներ: Երբ սովորողը լավ է սովորում, նրան գովում են ուսուցիչները, ծնողները, նրան որպես օրինակ են բերում մյուսների մոտ: Ավելին, դասարանում, որտեղ ուսուցչի կարծիքը ոչ միայն որոշիչ է, այլ միակ հեղինակավոր կարծիքն է, որի հետ բոլորը հաշվի են նստում, այս ասպեկտները գալիս են առաջին պլան: 7-րդ և 8-րդ դասարանի սովորողների մոտ «լավ աշխատելու կամ հեռու հեռանկարում բուհում սովորելու մտքերը վերացական են ու չեն կարող դրդել սովորել, այնուամենայնիվ սոցիալական մոտիվները անհրաժեշտ են աշակերտներին իրենց անձնական զարգացման համար:

Հարկ է նշել նաև, որ ժամանակակից դպրոցներում բավականին քիչ ժամանակ է հատկացվում այն պատճառների վերհանմանը, որոնք բերում են նախաձեռնողականության, ստեղծագործականության և մոտիվացիայի ցածր մակարդակի: Դպրոցում ուսումնական գործընթացը թույլ չի տալիս ցուցաբեել անհատական մոտեցում, որի շնորհիվ հնաավոր կլիներ հիմնական խնդիրների լուծումը:

Որպես ամփոփում պետք է նշել, որ դպրոցական ուզուցման հիմնակա նպատակը ինքնուրույնության, նախաձեռնության, ստեղծարարության« ըմբռնելի և իրական գործող մոտիվների ճիշտ համադրելն է, ինչպես նաև ճիշտ ժամանակին հաջող ուսումնառությանը կարևորություն տալը:

Եզրակացություն

Այսպիսով ՝ մանրամասնորեն ուսումնասիրելով հասարակագիտություն առարկայի ուսուցման ընթացքում ինքնուրույնության, նախաձեռնության ու ստեղծագործական ունակությունների զարգացման վերաբերյալ առկա տեսական նյութերը ու գործնականում կիրառելով դրանք, եկանք այն եզրահանգմանը , որ հասարակագիտություն առարկայի դասավանդման ընթացքում կիրառելով ժամանակակից ուսուցման տեխնոլոգիաներ ու հնարներ՝ կարող ենք զարգացնել սովորողների ստեղծարարությունը, ինքնուրույնությունը, նախաձեռնողականությունը:

Ստեղծագործական ունակությունները բնածին են: Ստեղծագործելու, արարելու ցանկությունն ու գենը յուրաքանչյուր մարդու մեջ է դրված, այլ բան է, թե ինչպես է նա այդ ունակությունը զարգացնում և դրսևորում, ինչ չափով է արտացոլում առօրյայում: Ստեղծագործական ունակությունների զարգացման հրաշալի շրջան է դպրոցական տարիքը: Ուսումնական հաջող գործընթացը, ծրագրերն իրենց հերթին կարող են նպաստել ստեղծագործական ունակությունների զարգացմանն ու դրսևորմանը: Հասարակագիտություն դասընթացի տեխոլոգիական համակարգը հնարավորություն է տալիս ապահովել 7-րդ և 8-րդ դասարանների աշակերտների հասարակական ինտեգրման կարողությունների և հմտությունների զարգացումը, բնապահպանական դաստիարակությունը՝ զարգացնելով նրա ստեղծագործական ու նախաձեռնողականությունը: Այս պարագայում հատկապես կարևորվում է սովորողների կողմից հասարակական դերերի, իրավաունքների և պարտականությունների գիտակցումն ու արժևորումը:: Միաժամանակ նպաստում է դիտելու, համեմատելու, հակադրելու, համակարգելու սովորողների ունակությունների զարգացմանը: Այս նպատակի իրականացման հարցում չափազանց կարևոր են դիդակտիկ նյութերի, սահիկահանդեսների, էքսկուրսիաների դերը, քանի որ դրանց նպատակաուղղված կազմակերպումն ու անցկացումը նպաստում է շրջակա միջավայրի վերաբերյալ սովորողի գիտելիքների ձեռքբերմանը, հարստացմանն ու մտահորիզոնի ընդլայնմանը: Մեծ է ընթերցանության, թիմային աշխատանքի, խնդրահարույց իրավիճակների, դերային խաղերի դերն ու նշանակությունը ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական կարողությունների ձևավորման գործում:

Ինքնուրույնությունն ու նախաձեռնությունը սովորողների ստեղծագործական հմտությունների զարգացման կարևոր պայման են: Ստեղծարարությունը սովորողի զարգացման և դաստիարակության գործում մեծ դեր ունի: Շատ կարևոր է, որ սովորողի շրջապատում կամ ընտանիքում լինեն նման մարդիկ, որոնք կկարողանան գնահատել նրա ստեղծարարական հմտությունները, պայմաններ ստեղծել դրանց զարգացման համար: Ստեղծարարական հմտությունների զարգացման ընթացքը կախված է ուսումնական գործընթացի բնույթից:

Սովորողների ստեղծագործական ունակությունները հնարավոր է զարգացնել տարբեր առարկաների ուսուցման ժամանակ համապատասխան մեթոդների կիրառմամբ: Ուսուցման գործընթացում պետք է համապատասխան պայմաններ ու միջավայր ստեղծել դպրոցականի ստեղծագործական կարողության դրսևորման ու զարգացման համար:

Ի տարբերություն ուսումնական այլ առարկաների՝ հասարակագիտություն առարկան ունի ինտեգրված բնույթ՝ պայմանավորված հետևյալ առանձնահատկություններով.

1. դասընթացում ներառված են աշակերտների համար հետաքրքրություն ներկայացնող թեմաներ,

2. դասընթացի իրագործման կարգը համատեղ ծրագրվում է ուսուցիչների և աշակերտների կողմից,

3. իրեն շրջապատող աշխարհին ծանոթանալուն զուգահեռ սովորողը անընդհատ փորձում է ընդլայնել իր պատկերացումները, մտահորիզոնը՝ ձեռք բերելու կայուն գիտելիքներ, ինքնուրույնության, նախաձեռնության, ստեղծագործական կարողություններ և հմտություններ տարբեր առարկաներից ու ոլորտներից:

Ուսուցման ընթացքում աշակերտները ուսուցչի ղեկավարությամբ իրենց ունեցած գիտելիքների հիման վրա ինքնուրույն լուծում են հիմնախնդիրներ, նախաձեռնում ու հաղթահարում դժվարին իրավիճակներ, որոնում գործողության նոր եղանակներ, հանդես բերում ստեղծագործական նոր լուծումներ, կարգավորում ու կողմնորոշում իրենց գործունեությունը, գործադրում խնդրային շարադրանքի, մասնակի որոնողական կամ էվրիստիկական, հետազոտական մեթոդներ, ինքնուրույնաբար ձևակերպում իրենց մտահոգությունները ու եզրահանգումները, հասնում վերջնական նպատակի: Նպատակը սովորողների ստեղծագործական զարգացումն է, ինչը կարելի է իրականացնել

հիմնախդիրները լուծելու միջոցով:

Հոգեբաններն ապացուցել են, որ ինքնուրույն ու ստեղծագործական մտածողությունն սկսվում է այն պահից, երբ մարդը հանդիպում է խոչընդոտների, որոնք հաղթահարելու համար նրա իմացած գիտելիքները չեն բավարարում,ուստի նա վերհիշում է իմացածը, պարզում իրեն պակասող գիտելիքները և որոնողական գործողություններով փորձում է հաղթահարել առաջադրված խնդիրը:

Գրականության ցանկ

1. Խաչատրյան Պ., Ինքնուրույնության և ստեղծագործական կարողությունների զարգացումը, Երևան, 1974:
2. Թոփուզյան Ա., Հումանիստական դաստիարակության խնդիրը մանկավարժության մեջ, Երևան, 2009:
3. Դավթյան Մ. և ուրիշներ, Կրթական մշակման և ինտեգրման մոտեցումներ, Երևան, 2004:
4. Թորգոմյան Լ., Մանկավարժությանընդհանուր հիմունքներ, Երևան, 2005:
5. Асеев В.Г. Мотивация поведения и формирование личности. – м.,2008.
6. Богоявленская Д. Б., Психология творческих способностей — М., Издательский центр «Академия» 2002.
7. Казанцевой Г.Н. “Изучение отношения к учению и к учебным предметам” (2003)
8. Матюшкин А. М., Проблемные ситуации в мышлении и обучении, Москва: «Педагогика», 1972.
9. Николаева Е.И., Психология детского творчества, Питер, 2010.
10. Седьмая волна психологии, Выпуск 1,/ Сб. под ред. Козлова В.В., Качановой Н.А. - Ярослваль, Минск,2006.
11. Цукерман Г.А. Виды общения в обучении. – Томск: Пеленг, 2003. Чернецкая Н. И.,
12. Творческое Мышление как высшая форма мышления, Вестник Адыгейского государственного университета. Серия 3: Педагогика и психология, № 2, 2009

Հավելված

Հարցաշար

1. Մի փոքր խոսենք ընդհանուր ձեր սիրելի առարկաներից. կպատմե՞ք, թե որ առարկաներն եք առավել սիրում:
2. Ի՞նչ եք կարծում՝ որքանով է կարևոր Հայոց լեզու առարկան դպրոցական ծրագրում: Որո՞նք են այն սովորելու(գուցե նաև չսովորելու) ձեր հիմնական պատճառները:
3. Ինչո՞վ եք կարևորում հայոց լեզուն սովորելը՝ ոչ միայն որպես առարկա, այլ որպես մայրենի լեզու: Արդյոք առանձնացնո՞ւմ եք մյուս առարկաներից իր կարևորությամբ թե ոչ:
4. Սովորելու ընթացքում ավելի շատ գրավում է նոր գիտելիքներ, փաստեր, երևույթներ բացահայտե՞լը, թե՞ ավելի կարևոր պատճառներ կան. Օրինակ բարձր գնահատականը և այլն:
5. Ապագայի վրա կարո՞ղ է արդյոք անդրադառնալ հայոց լեզու առարկայի գիտելիքները, թե՞ զուտ դպրոցական ծրագիր է, որը կավարտեք և վերջ:
6. Որքանո՞վ է կարևոր ձեզ համար ծնողների, շրջապատի կարծիքը ձեր սովորելու կամ չսովորելու հանդեպ:
7. Անծանոթ միջավայրում ձեզ համար արդյոք կարևո՞ր է ցուցադրել Ձեր լեզվական գիտելիքները, թե՞ էական նշանակություն չեք տալիս դրան:
8. Օրինակ ուսուցչի լավ կամ վատ լինելը կարո՞ղ է անդրադառնալ ձեր սովորելու կամ չսովորելու որոշման վրա: